հաստատում եմ

2022-2023 ուսումնական տարի

Դասղեկի տարեկան

աշխատանքային ծրագիր

Դպրոց՝ Ստեփանավանի N2 հիմնական դպրոց

Դասարան՝ 7-րդ <<ա>>

Դասղեկ՝ Գրետա Նազարյան

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը) 7-րդ <<ա>> դասրանը բաղկացած է 25 աշակերտից՝ 9 տղա, 16 աղջիկ: Ունենք 1 գերազանցիկ աշակերտ՝ Խառատյան Վաչեն: Աշակերտները հաճույքով են հաճախում դպրոց, սիրով և պատրաստակամորեն կատարում են հանձնարարված առաջադրանքները: Ընկերասեր են, համախմբված և համերաշխ: Դասեին տիրում է առողջ մրցակցություն; Սիրում են մասնակցել դասարանային և արտադասարանային միջոցառումներին: Ասմւնքում են, երգում, պարում, նվագում, նկարում; Լավ կոլեկտիվ է ձևավորվել:

2. Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքներն ուստարվա ընթացքում

Ծանոթացնել դպրոցի կանոնակարգին, վարքի կանոններին: Դաստիարակել ազնվություն, արդարություն, բարություն, պարտաճանաչություն, պարտքի զգացում, աշխատասիրություն, հոգատար և բարեխիղճ վերաբերմունք՝ շրջապատի, դպրոցի նկատմամբ:

Դաստիարակել հարգանք մեծերի նկատմամբ: Ձևավորել հայրենասեր, ընկերասեր, ազգանվեր անհատներ՝ պատրաստ դիմագրավելու արտաքին և ներքին թշնամիներին:

Սերմանել սեր ուսման նկատմամբ, զինվել գիտելիքներով բոլոր առարկաներից, քանի որ մեր երկրին անհրաժեշտ են խելացի զավակներ:

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն

Սովորեցնել մեր դարավոր պատմությունը, ճանաչել մեր հերոսներին, հպարտանալ նրանց սխրանքներով: Ծանոթացնել ազգային տոների, ավանդույթների, սովորույթների հետ: Այցելել հայկական վանքեր, կոթողներ, հուշարձաններ:

3.2 Գեղագիտական դաստիարակություն

Կիրականացնենք զրույցներ հայ անվանի նկարիչների, երգահանների մասին: Կայցելենք թանգարաններ, ցուցահանդեսներ: Կիրականացնենք արշավներ, էքսկուրսիաներ դեպի մշակութային օջախներ:

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Կիրականացնենք զրույցներ հայրենասիրական թեմաներով: Կիմանան հայ ազատամարտիկների, նրանց հերոսությունների մասին, հայոց պատմության հերոսական պայքարի և հաղթանակների մասին:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն

Կիրականացնենք արշավներ, զբոսանքներ բնության գրկում: Կկարևորեն առավոտյան մարզանքը, ֆիզիկական դաստիարակությունը:

3.5 Աշխատանքային դաստիարակություն

Կիրականացնեք զրույցներ աշխատասիրության թեմաներով: Կսովորեն աշխատել, օգնել ծնողներին տնային գործերում: Կսահմանենք ամենօրյա հերթապահություն:

3.6 Բնապահպանական դաստիարակություն

Սովորեցնել պահպանել բնությունը կազմակերպել ծառատունկ, աճեցնել բույսեր, ծաղիկներ:Սեր առաջացնել կենդանական և բուսական աշխարհի նկատմամբ: Կազմակերպել արշավներ դեպի բնության գիրկ:

4. Դպրոց-ընտանիք կապը

Սիրել դպրոցը, պահպանել գույքը: Ծնողներին մասնակից դարձնել դպրոցական կյանքին: Կապ պահպանել դպրոցի, դասղեկի, ուսուցիչների հետ, զգուշացնել աշակերտի բացակայությունների, դասը չընկալելու և այլնի մասին, ներկայանալ ծնողական ժողովներին: